ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԻՐԱՆԸ՝ ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ԱԶԴԵՑԻԿ ԳՈՐԾՈՆ (1960-70-ԱԿԱՆ ԹԹ.)

Ներկայացվող խնդիրը դուրս չի մնացել արևելագետների, միջազգայնագետների և պատմաբանների տեսադաշտից, որի շուրջ աշխատանքներ են իրականացրել Ն.Հ.Հովհաննիսյանը, Ա.Զ.Աղաբաջյանը, Ա.Բ.Բաղդասարովը, Դ.Դ.Ալիբեյլին, Ա.Ա.Ալիևը, Լ.Վ.Վակովան և այլք: Սակայն առկա նոր նյութերի պարագայում հանգում ենք նոր եզրակացությունների, որոնք ստորև կներկայացնենք:

1960-70-ական թվականներին շահական Իրանը, դառնալով տարածաշրջանում հզոր տերություն, իր ռազմական, տնտեսական, բնական հարստությունների և մարդկային խոշոր ռեսուրսների առկայությամբ, փորձում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վրա տարածել իր ազդեցությունը, ինչպես նաև ստանձնել Պարսից ծոցում թելադրող պետության դերը: Դրան նպաստում էին մի շարք գործոններ. ամերիկյան լայնամասշտաբ աջակցությունը Իրանին, Իրանի՝ նավթի ազգայնացմանն շնորհիվ կուտակված ֆինանսական միջոցները, մարտունակ բանակը՝ զինված արդիական զենքով և զինամթերքով:

1960-70-ական թվականներին իրանա-ամերիկյան հարաբերությունները թևակոխել էին որակական նոր փուլ: Վաշինգտոնն այդ տարածաշրջանում վարում էր «երկու հենարանների» քաղաքականություն՝ հենվելով Իրանի և Սաուդյան Արաբիայի վրա՝ մեծ հույսեր կապելով հատկապես շահական վարչակարգի հետ:

Սաուդյան Արաբիայի և Իրանի գաղափարական ու քաղաքական կողմնորոշումը դեպի Արևմուտք, ինչպես նաև այդ երկրների անտեսական փոխադարձ կապը համաշխարհային շուկայի և ԱՄՆ-ի տնտեսության հետ, դարձրեց նրանց ամերիկյան արտաքին քաղաքականության գլխավոր հենարանը տարածաշրջանում[1]:

Ինչպես բնորոշ է գերհզոր տերությանը, ԱՄՆ-ի վարչակազմն էլ հիշյալ տարածաշրջանում Իրանի զարգացմանը նպաստելիս ուներ իր սեփական շահերը: Նա ջանում էր հզորացնել Իրանը, որպեսզի կանխի Խորհրդային Միության հնարավոր ագրեսիան, ինչպես նաև փորձում էր

ապահովել իր տեղը իրանական նավթի ներմուծման գործում: Բացի այդ աջակցում էր Իրանի որոշմանը, այն է՝ Սաուդյան Արաբիայի հետ միասին ապահովել Պարսից ծոցի անվտանգությունը և կայունությունը, պահպանում էր Իրանի հետ տնտեսական և առևտրական սերտ հարաբերություններ, նպաստում էր Իրանի քաղաքական կայունությանը, տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային համագործակցությանը Թուրքիայից մինչև Հնդկաստան[2]:

Իրավիճակը Մերձավոր և Միջին Արևելքում շիկացավ, երբ 1968թ. հունվարի 16-ին Անգլիայի վարչապետ Հարոլդ Վիլսոնը Համայնքների պալատում հայտարարեց, որ մինչև 1971թ. վերջը անգլիական ռազմական հենակետերը կտարհանվեն Հարավարևելյան Ասիայից և Պարսից ծոցի շրջանից[3]: Բնակլանաբար, առաջացած այդ վակուումը փորձեցին լրացնել ինչպես Իրանը, այնպես էլ Սաուդյան Արաբիան, որն իրեն ի դեպ համարում էր Մեծ Բրիտանիայի «բնական ժառանգորդը»՝ հավակնություններ ունենալով իր ազդեցության տակ վերցնել Պարսից ծոցի իշխանությունները[4]: Մինչդեռ Մոհամմեդ Ռեզա շահն էլ իր հերթին հայտարարեց, որ Մերձավոր և Միջին Արևելքի խաղաղության պահպանման պատասխանատվությունն այսուհետ Իրանը վերցնում է իր վրա[5]: Ի դեպ, նման հավակնություններ ուներ նաև Իրաքը:

Միացյալ Նահանգների երկու դաշնակիցների՝ Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև նկատվում էր լարված մրցակցություն, միջպետական հարաբերություններում առկա էին մի շարք խնդիրներ, սակայն զուտ առևտրաբ երկու կողմերն էլ ցուցադրում էին իրենց ջերմ հարաբերությունները:

Առաջին լարվածությունը նկատվեց Պարսից ծոցի մայրցամաքային ծանծաղուտի տարածքների բաժանման ժամանակ: Այդ խնդիրը առավել ցայտուն երևաց 1940-50թթ., երբ գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ, հնայավոր եղավ շահագործել նավթով հարուստ ծովի ընդերքը: 1963թ. ապրիլին Իրանի կառավարությունը որոշեց օտարերկրյա ընկերություններին տալ նավթային կոնցեսիա, Պարսից ծոցի շելֆի այն տարածքում, որի սահմանները Իրանն ինքնակամ համարում էր իրենը: 1963թ. մայիսի 1-ին Իրաքը, հունիսի 4-ին Քուվեյթը, հունիսի 15-ին Սաուդյան Արաբիան բողոքեցին և Իրանից պահանջեցին վերանայել սահմանումը: Իրանը հայտնեց իր պատրաստակամությունը բանակցություններ վարել այդ հարցի շուրջ: Վերջնական համաձայնագիրը ստորագրվեց 1968թ. հոկտեմբերի 24-ին, որով կողմերը կարողացան համաձայնության գալ և ազդեցության գոտիները իրար մեջ բաժանել, ըստ որի, ճանաչվեց Իրանի ինքնիշխանությունը Ֆարս կղզու, իսկ Սաուդյան Արաբիայինը՝ Էլ-Արաբիա կղզու նկատմամբ: Նավթահանքերի գոտիները ևս հավասարապես բաժանվեցին[6]:

Երկրորդ միջադեպը կողմերի միջև գրանցվեց 1968թ-ին, երբ Բահրեյնի շեյխը պաշտոնական այցով ժամանեց Սաուդյան Արաբիա, ինչին Իրանի ղեկավար մարմինները խիստ բացասաբար արձագանքեցին. չէ որ դեռևս 1957թ. հոկտեմբերի 10-ին Իրանի կառավարության որոշման համաձայն Բահրեյնի կղզիախումբը հայտարարվել էր Իրանի 14-րդ օստան (նահանգ): Այցելելով Էր-Ռիադ՝ շեյխն ակնկալում էր ստանալ Սաուդյան Արաբիայի աջակցությունը շահին ընդդիմանալու համար: Որպես բողոքի նշան Իրանի շահը հետաձգեց նախատեսված այցը Էր-Ռիյադ, ինչը Ֆեյսալ թագավորը որակեց որպես «ոչ բարեկամական քայլ Սաուդյան Արաբիայի նկատմամբ»[7]:

Սակայն ամերիկյան դիվանագիտությունը ճնշում գործադրեց և Իրանի, և Սաուդյան Արաբիայի վրա՝ ձգտելով հարթել տարաձայնությունները երկու երկրների միջև: Ուստի վերջիններիս այլևս ոչինչ չէր մնում, քան բարելավել հարաբերությունները անխուսափելի համագործակցության համար: Իրանի շահի արտաքին քաղաքականության նպատակներից մեկն էր թույլ չտալ որ սասանվեն, էլ չենք ասում տապալվեն տարածաշրջանի միապետությունները[8], մանավանդ որ արդեն իրողություն էր 1958թ. Իրաքի, 1962թ. Եմենի միապետությունների տապալումը[9]:

Իրանը տարածաշրջանում իրեն առավել վստահ զգաց հատկապես 1972թ., երբ ԱՄՆ-ի նախագահ Ռիչարդ Նիքսոնը խոստացավ շահին հնարավորություն ընձեռել գնել Միացյալ Նահանգների արտադրության ցանկացած տեսակի ռազմական տեխնիկա: Դա համընկնում էր Մահամմեդ Ռեզա շահի նպատակներին, քանի որ վերջինս ցանկանում էր Իրանը դարձնել տարածաշրջանի ամենամարտունակ և հզոր բանակ ունեցող երկրներից մեկը: Այդ մասին խոսել էր նաև Իրանի շահը Նյուսվիքին տված հարցազրույցի ժամանակ, որն արտատպել է Ջեյհան Ինքերոնեշն թերթը. "Իրանը ԱՄՆ-ից պատրաստվում է գնել 700 ուղղաթիռ՝ որից 220-ը ռազմական, ներառյալ «Չինուկով» և սուզանավերի դեմ պայքարող 18 «Սիկորսկի» տիպի ուղղաթիռ, 500 մլն դոլար ընդհանուր արժողությամբ": Մինչդեռ շահը նշում էր, որ տարածաշրջանի մի շարք երկրներ այդ թվում Եգիպտոսը, Սիրիան և Իսրայելը գտնում են, որ իրենց անվտանգության պահպանման համար անհրաժեշտ են մոտավորապես 500 օդային միջոցներ: "Բացի Միացյալ Նահանգներից ձեռք բերված ռազմական տեխնիկայի,-շարունակում է շահը,- Իրանը Անգլիայից գնում է «Չիֆթեն» տիպի 800 տանկ, 480 մլն դոլար ընդհանուր արժողությամբ, վերանորոգում և արդիականացնում ենք «M-47» տիպի 400 տանկ, որը ձեռք էինք բերել ԱՄՆ-ից, ինչպես նաև «M-60» տիպի 460 տանկ: Ընդհանուր առմամբ 1700 տանկ: Նավատորմը ևս կրկնապատկում ենք: Իրանը Միացյալ Նահանգներից ստացել է նաև լազերի միջոցով կառավարվող «Սմարտ» տիպի ռումբ»[10]: 1975թ. Իրանը սլաստ-

բաստվում էր Միացյալ Նահանգներից գնել 8 հատ 1,200 Mwe (megawatt-electric) հզորությամբ ռեակտոր, համապատասխանաբար Ֆրանսիայից էլ ձեռք էր բերվելու 2 հատ 900 Mwe. Գերմանիայից 2 հատ 1,200 Mwe հզորությամբ ռեակտորներ[11]: Իսկ 1977թ. շահը ԱՄՆ-ից գնեց շուրջ 6 միլիարդ դոլարի զենք, ևս 12 միլիարդի էլ պատվիրել էր[12]: Ընդհանրապես Ռեզա շահը նպատակ ուներ մինչև 1994թ. միջուկային ռեակտորների հզորությունը հասցնել 23.000 Mwe[13]:

Ըստ Էթթելաաթի տվյալների, ԱՄՆ-ը շահի հետ գաղտնի համաձայնություն էր ձեռք բերել, ըստ որի Իրանի տարածքում կառուցել էին 7 ռադիոէլեկտրոնային լրտեսական կայաններ[14]:

Իրանի ռազմականացումն առավել ակնհայտ դարձնելու համար բերենք 1973-1980թթ. Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ռազմական ծախսերի հաշվեկշիռը, ըստ ԽՍՀՄ-ի Անվտանգության նախարարության տվյալների[15].

Երկիր	1973-1976		1977-80	
	մլրդ. դոլար	ընդհանուր գումարի մասնաբաժինը %	մլրդ. դոլար	ընդհանուր գումարի մասնաբաժինը %
Իրան	29.1	44,0	28,0	27,6
Իրաք	6,1	9,2	10,3	10,1
Սաուդյան Արաբիա	19,8	29,9	41,1	40,5
Թուրքիա	4,9	7,4	7,3	7,2

Ընդհանրապես, Խորհրդային Միությունը բողոքեց իր հարավային սահմանների մոտ նման քանակի ռազմական ուժի և, որ ավելի կարևոր էր, ամերիկյան ռազմական մասնագետների թվի աճի կապակցությամբ: Ի պատասխան Խորհրդային Միության անդադար բողոքների, ԱՄՆ-ի նախագահ Նիքսոնը ամերիկացիների ներկայությունը բացատրում էր նրանով, որ ԱՄՆ-ը չի կարող անտեսել խորհրդային ժամանակակից նավատորմի ներկայությունը Հնդկական օվկիանոսում, Միջերկրական ծովում և Աֆրիկայի ափերի մոտ: Ի պաշտպանություն ամերիկացիների՝ իրանական մամուլը մատնանշում էր, որ Եգիպտոսում գործում էր ռուս մասնագետների 15 հազարանոց մի խումբ, այն բանից հետո, երբ ԽՍՀՄ-ը Եգիպտոսին վաճառել էր զենք և զինամթերք: Այնպես որ նրանք բնական են համարում օտարերկրյա ներկայացուցիչների առկայությունը երկրում, եթե այդ երկիրը գնել է ռազմամթերք մեկ այլ երկ-

ից[16]: Ամերիկյան խորհրդականների կողմից կազմվել էր իրանական զորքին ամերիկյան զենքով զինելու ծրագիր. ներառյալ հրթիռներ և մարտական տեխնիկա, ինչպես նաև Իրանի տարածքում ռազմական օդանավակայան, վայրէջքի հրապարակ, նավահանգիստներ, նավակառան, ճանապարհներ, ռադիոյի և հեռախոսային կապի ցանց կառուցել:

Այսպիսով, կարգավորելով սեփական ռազմական ուժերը, ունենալով բավական ֆինանսական միջոցներ ի հաշիվ նավթի[17], այսուհետև Պարսից ծոցի հետ կապված հարցերը հայտնվեցին Իրանի քաղաքականության օրակարգում, որն առավել հայտնի է որպես Պարսից ծոցի նկատմամբ «ակտիվ կուրս» քաղաքականություն: Այս քաղաքականությունը ուսզմավարական նշանակություն ուներ Իրանի համար, քանի որ Պարսից ծոցով էր իրականացվում ինչպես իրանական ապրանքների առևտուրը, այնպես էլ նավթի և նավթամթերքի արտահանումը միջազգային շուկա: Իրանը իր վրա էր վերցնում տարածաշրջանում յուրաքանչյուր խնդրի լուծման ղեկավարությունը, որի մասին դեռևս 1969 հուլիսին տպագրվեց Իրանի ԱԳՆ-ի հայտարարության մեջ, որտեղ նշվում էր. «Ոչ մի դեպքում չի կարելի հնարավորություն տալ մյուս երկրներին միջամտել Պարսից ծոցի գործերին, Իրանի կառավարությունը պատրաստ է համագործակցել Պարսից ծոցի բոլոր երկրների հետ՝ հանուն տարածաշրջանի խաղաղության և անվտանգության պահպանման: Բայց եթե Պարսից ծոցի մյուս երկրները չեն կարող մասնակցել համատեղ պաշտպանությանը, ապա Իրանն ի վիճակի է միայնակ իր վրա վերցնել այս տարածաշրջանի շահերի պաշտպանության գործը»[18]:

Ուշադրության է արժանի Իրանի դիրքորոշումը Պարսից ծոցում առաջացած բազմաթիվ խնդիրների և դրանց լուծման եղանակների վերաբերյալ:

Կարևորելով Իրանի դերը տարածաշրջանում, դեռևս 1971թ. նոյեմբերի 29-ին Իրանի և Շարջայի կառավարությունները պաշտոնապես կնքեցին համաձայնագիր Աբու-Մուսա կղզին Իրանի ինքնավարությանն տակ թողնելու վերաբերյալ: Օգտվելով այս համաձայնագրից, հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, Ռեգա շահի հրամանով իրանական զորքերը կայծակնային արագությամբ (6 ժամվա ընթացքում) տեղակայվեցին Աբու-Մուսայում, միևնույն ժամանակ գրաղեցրին նաև Մեծ և Փոքր Թոմբերը[19], որոնց նկատմամբ Իրանը միշտ էլ հավակնություններ է ունեցել: Դրանով փաստորեն, Իրանը իր վերահսկողության տակ վերցրեց Հորմուզի նեղուցը[20]:

Իրանի կողմից՝ նշված կղզիների գրավումը ուժեղ հակազդեցություն առաջացրեց Արաբական աշխարհում: Առաջացած հարցի կապակցությամբ առավել զուսպ մոտեցում ցուցաբերեց Սաուդյան Արաբիան: Այս քաղաքականությունը մի կողմից ձեռնտու չէր էր-Ռիադին, քանի որ Իրանն այդպիսով առավել ամրապնդում էր իր դիրքերը Պարսից ծոցում,

իսկ մյուս կողմից. այս իրադարձություններին, որպես հակակշիռ, Սաուդյան Արաբիայի շուրջ համախմբվեցին արաբական փոքր պետություններ: Վերոհիշյալ կոգիների գրավման հետևանքով խզվեցին դիվանագիտական հարաբերությունները Իրանի և Իրաքի միջև, ինչպես նաև լարվածություն նկատվեց Արաբական աշխարհի և Իրանի փոխհարաբերություններում, որի արդյունքում էլ արաբական մի շարք երկրների պարբերականներում ի հայտ եկան Պարսից ծոցը Արաբական ծոցի վերանվանելու տեսակետներ[21]:

1971թ. սկզբից Բաղդադը ջանք ու եռանդ չէր խնայում կանխելու Թեհրանի ազդեցության տարածումը Պարսից ծոցում: Լարվածությունն ավելի խորացավ, երբ Իրաքի կառավարության 8 նախարարներից բաղկացած խումբը այցելեց արաբական 13 երկրներ՝ նպատակ ունենալով ստեղծել հակահրանական միասնական ճակատ[22]:

Սակայն Իրաքի իրականացրած գործողությունները ստվեր չգցեցին Իրանի հզորության վրա, որի ապացույցը կարելի է համարել Դոֆարում առաջացած խնդիրների պատճառով Օմանի սուլթան Ղաբուս բեն Սայիդի՝ Իրանին տված նախապատվությունը: Ղաբուս բեն Սայիդը պաշտոնական խնդրանքով դիմեց Մոհամմեդ Ռեզա շահին, այն է՝ օգնել երկրի հարավում՝ Դոֆար նահանգում առաջացած հեղափոխական շարժումները ճնշելու համար: Շահը, բնականաբար, չմերժեց խնդրանքը, քանի որ գտնում էր, "թե այն սպառնում է Պարսից ծոցի ավազանի խաղաղությանը"[23]: 1973թ. դեկտեմբերի 23-ին իրանական 3 հազարանոց բանակը ներխուժեց Դոֆար: Արաբական աշխարհը սա ևս միանշանակ չընդունեց: Սաուդյան Արաբիան, լինելով ԱՄՆ-ի դաշնակիցը, հարցին առնչվել զուսպ մոտեցում ցուցաբերեց, որի պատճառը մեր կարծիքով ույն փաստն է, որ դեռևս "1953թ. ամերիկացիները կոնցեսիա էին ստացել Դոֆարում նավթային հետազոտություններ կատարելու համար"[24]: Եվ փաստորեն, բռնկված հեղափոխությունը հարվածում էր նաև ամերիկյան շահերին: Շահը մատնանշում էր, որ Դոֆարում առաջացած շարժման հովանավորները կոմունիստական կողմնորոշում ունեցող Հարավային Եմենի և Չինաստանի կառավարություններն են[25]:

Շահը Քեյհան ինթերնեշնլ թերթին տված հարցազրույցում նշում էր, որ «Իրանը թույլ չի տա արաբական որևէ երկրում արմատական ուժի իշխանության գլուխ գալը»: Հիշյալ հարցազրույցում շահն անդրադարձել է նաև Իրաքի և Քուվեյթի հարցին՝ «եթե Իրաքը որոշի գրավել Քուվեյթը, և վերջինս էլ մեզ դիմի օգնության խնդրանքով, մենք անպայման կաջակցենք Քուվեյթին: Իհարկե, շատ բան կախված կլինի նաև Սաուդյան Արաբիայից և Հորդանանից»[26]:

Սակայն 1973թ. հոկտեմբերի 6-ին բռնկված 4-րդ արաբա-իսրայելական պատերազմը ստիպեց տարածաշրջանի երկրներին նորմալացնել հարաբերությունները բոլոր մահմեդական երկրների միջև: Իրանը չէր

կայուն բացահայտ հակաարաբական դիրքորոշում ընդունել և դրա համար հասկացրեց, որ այս պատերազմում արաբական երկրները կարող են համոզված լինել Իրանի չեզոքության պահպանման վրա[27]: Այս հայտարարությունը լավին բավարարեց Իրաքին, քանզի վերջինս կարող էր Իրանի սահմանի մոտ տեղակայած զորքերը տեղավտխել պատերազմական օջախի մոտ:

Արաբական աշխարհը կոչ էր անում Իրանին նավթ չմատակարարել Իսրայելին: Իրաքի ներկայացուցիչները իրանական կողմի հետ հանդիպելիս բազմիցս բարձրացրել են պաղեստինյան խնդիրը և ջանում էին Թեհրանին ևս ներքաշել հակասիոնիստական ճակատի մեջ: Սակայն շահական կառավարությունը հակված չէր բարելավել հարաբերությունները Բաղդադի հետ՝ վտանգելով Իսրայելի հետ ունեցած իր կապերը[28]: Ընդհանրապես 70-ական թվականներին Իրանի հարաբերությունները սերտացան հատկապես ԱՄՆ-ի քաղաքականությանը ձեռնտու հունով ընթացող երկրների՝ Եգիպտոսի, Մաուրյան Արաբիայի, Հորդանանի և Իսրայելի հետ[29]:

Արաբա-իսրայելական պատերազմի բռնկումից ի վեր և՛ Իրանը, և՛ Իրաքը քննադատում էին Իսրայելի գործողությունները, պահանջում էին հետ վերադարձնել 1967թ. գրաված տարածքները և Պաղեստինի ժողովրդին տալ ինքնավարության իրավունք: Սակայն ի տարբերություն Իրաքի, որն ընդգրկվել էր հակասիոնիստական ճակատի մեջ, Իրանը շարունակում էր Իսրայելի հետ իր լայնամասշտաբ ռազմա-քաղաքական և տնտեսական կապերը[30]:

Հարկ է նշել, որ այդ նույն ժամանակ նկատվում էր Սաուդյան Արաբիայի և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների սառեցում, քանի որ 1973թ. բռնկված 4-րդ արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ սաուդյան կառավարողները առավել ակտիվ ներքաշվել էին խնդրի լուծման գործընթացին՝ ի պաշտպանություն արաբական կողմի, դրանով իսկ շահելով նոր դիվիդենտներ Արաբական աշխարհում:

Որպեսզի էլ ավելի մեծացնի Իրանի ազդեցությունը տարածաշրջանում, շահը 70-ականների սկզբին հանդես եկավ մի շարք առաջարկություններով՝ այն է՝ ստեղծել Ասիական ընդհանուր շուկա, ստեղծել Պարսից ծոցի երկրների ռազմա-քաղաքական բլոկ, հրավիրել կոնֆերանս՝ տարածաշրջանի անվտանգությունը պահպանելու համար ուղիներ որոնելու նպատակով: Դրա համար 1974թ. Մոհամմադ Ռեզա շահ Փահլևին մեծ շրջագայություն կատարեց հարավասիական Ասիայի երկրներով՝ կնքելով մի շարք առևտրական համաձայնագրեր և տնտեսական համագործակցության պայմանագրեր: Այդ այցի նպատակն էր ստեղծել «Ասիական ընդհանուր շուկա»՝ Եվրոպական ընդհանուր շուկայի օրինակով[31], բնականաբար, Իրանի հովանու ներքո, որը կարող էր հանդես գալ որպես հակակշիռ Եվրոպական շուկային:

1975թ., Սաադյան Արաբիայի պաքայազն Ֆահդը այցելեց Իրան: Օգտվելով այդ պատեհ առիթից շահն առաջարկեց կոնֆերանս հրավիրել Պարսից ծոցի երկրների ղեկավարների մակարդակով՝ «տարածաշրջանի անվտանգության պահպանման ընդհանուր ուղի գտնելու» նպատակով[32]: Սակայն այդ առաջարկը չընդունվեց, քանի որ հենց այդ տարածաշրջանի երկրների միջև առկա էին չլուծված բազմաթիվ խնդիրներ: Ինչպես տեսնում ենք Իրանի նախաձեռնությունները հիմնականում չիրականացան, քանի որ Արաբական աշխարհը չէր ցանկանում տարածաշրջանում առաջատարի դերում տեսնել Թեհրանին:

1970-ական թվականների կեսերին Իրանը՝ տարածաշրջանում իրական ազդեցություն ձեռք բերելու համար, սնհրաժեշտ ուշադրություն դարձրեց գիտատեխնիկական նվաճումների և հատկապես ատոմային էներգետիկայի զարգացման վրա: Եվ ահա 1974թ., Մոհամմեդ Ռեզայի նախաձեռնությամբ Իրանում ստեղծվեց Ատոմային էներգետիկայի կազմակերպություն: Հայտարարվեց, որ նպատակ ունեն ստեղծել մի շարք ատոմային կայաններ[33]:

Շահի այս նախաձեռնությունը մեծ աջակցություն գտավ հատկապես Արևմուտքի կողմից: Նախատեսվում էր մինչև 2000թ. կառուցել 20 ԱԷԿ 23 հազար մեգավատ ընդհանուր հզորությամբ, որի շնորհիվ Իրանը կդառնար Մերձավոր և Միջին Արևելքում ատոմային էլեկտրակայանների ցանց ունեցող հզոր տերություններից մեկը: Ատոմակայանների կառուցման առաջին փորձը իրականացրեց ԳՖՀ-ն՝ Բուշեհրում: Այդ գործին մեծապես աջակցում էր նաև Ֆրանսիան, ծրագրելով ատոմակայանների կառուցում Աբադանում և Ահվազում: 1978թ. իրանա-ամերիկյան պայմանագրի համաձայն, Միացյալ Նահանգները նախատեսում էր կառուցել 8 ԱԷԿ: Սակայն 1979թ. Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո, նրա թեոկրատիկ կառավարությունը հրաժարվեց միջուկային ծրագրերի իրականացումից, և Ատոմային էներգետիկայի կազմակերպությունը չեղյալ հայտարարեց նախկինում կնքած պայմանագրերը ԳՖՀ-ի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ: Քիչ ժամանակ անց, ԻԻՀ-ն եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է ավարտին հասցնել Բուշեհրում ԱԷԿ-ի կառուցման աշխատանքները: Արդյունքում՝ շարունակվեց ծրագրավորված երկու ԱԷԿ-ների կառուցումը, որոնք առավել հայտնի էին որպես Իրան 1 և Իրան 2 ծրագրեր: Մինչև Իսլամական հեղափոխությունը դրանցից առաջինը կառուցվել էր 95%-ով, երկրորդը 75%-ով[34]:

Այսպիսով, Միացյալ Նահանգների գործուն աջակցությամբ, ինչպես նաև 1973թ. Իրանի նավթի de facto ազգայնացման շնորհիվ առաջացած ֆինանսական զգալի կուտակումների միջոցով, Իրանն արագ տեմպերով համալրեց բանակը ժամանակակից զենքով և զինամթերքով, որն էլ հնարավորություն տվեց նրան դառնալ տարածաշրջանում ռազմական ազդեցիկ ուժ և քաղաքական կարևոր գործոն: Ինչպես տեսանք վերը շա-

բաղրվածից, Իրանը հարմար առիթը բաց չէր թողնում տարածաշրջանում առաջացած խնդիրների կարգավորմանը մասնակից դառնալու համար, ակնկալելով էլ ավելի մեծացնել իր ազդեցությունը: Իրանի հզորացման նախադրյալներից մեկն էլ այն էր, որ մեծ ուշադրություն դարձվեց գիտատեխնիկական ոլորտի զարգացման վրա, որի հասմալ չէր խնայվում ոչ մի միջոց:

Վերը նշվածի շնորհիվ էր, որ մինչև Իսլամական հեղափոխությանը, մի շարք ամերիկյան քաղաքագետներ Իրանը դիտում էին որպես ՆԱՏՕ-ի հարավային թևի բնական շարունակություն:

GOHAR ISKANDARYAN

IRAN AS INFLUENTIAL FACTOR OF THE PERSIAN GULF (1960-1970s)

The Shah of Iran placed a very high priority to building up the Iranian armed forces and improving Iran's defensive capabilities. He also sought to expand Iran's role in regional and world affairs, involving Iran in various regional conflicts (for example Dhofar, or islands of Persian Gulf-Abu Musa, the Great and Small Tunbs) and establishing visible presence for Iran in World forums such as the international oil market.

However, Iran's growing oil revenue and military power, the emergence of detente between the superpowers, and departure of British forces from the Persian Gulf in the early 1970s, enabled Iran to play a much more active role in regional affairs at that period.

ՕԳՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. США и развивающиеся страны в 70-е годы, М. 1981, с. 202
2. Кокошина В.А., "Некоторые проблемы американо-иранских отношений в 60-70гг.", Развивающиеся страны. Политика и идеология, Москва, 1985, с. 138.
3. Pahlavi Mohammad Reza, The Shah of Iran, Answer to History, New York, 1980, p. 141.
4. Драмбянц Г.Г., Персидский залив без романтики, М., 1968, с. 38.
5. Валькова Л.В., Саудовская Аравия в международных отношениях, М.1979, с. 190.
6. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока 1946-1978, Москва, 1989, с. 49.
7. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока, с. 47.
8. Հովհաննիսյան Ն., Իրանը Մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում (1979-1992թթ.) Իրան Նամէ, Երևան, 1993, N 2, էջ 3:
9. Эттелаат 1978.10.01, 1978.13.11.
10. Ньюсуик, Кейхан интернатионал 16.05.73.

11. Cottrell Alvin J., A.General Survey, The Persian Gulf States, Baltimore & London, 1980, p. 159.
12. Ramazani R.K., Iran's Revolution. The Search for Consensus, Washington. 1990, p. 49.
13. www./arouchepum.com/ other/2003/3039 iran-nuc.- Iran's Nuclear Energy: A Cheney Casus Belli?
14. Эттелаат 25.05.73.
15. Военная экономика стран Востока, научный сборник N 6, для служебного пользования, 000079, М.1986, с. 11-12.
16. Эттелаат 25.05.73
17. Եթե 1970թ. նավթից ստացած Իրանի եկամուտը կազմում էր 791 մլն դոլար, ապա 1973թ. այն հասավ 2,6 մլրդ դոլարի, 1974-ին 4,6 մլրդ, իսկ 1975թ. այն աճեց մինչև 17,8 մլրդ դոլարի: The Iranian Journal of International Affairs, vol V, N2, Tchran 1993, p. 461. Նավթից ստացվող եկամուտների մեծացումը առաջին հերթին կապված էր նավթի գնի բարձրացման հետ: 1973թ. Սաուդյան Արաբիան առաջարկեց նավթի գինը բարձրացնել, մեկ բարել նավթի համար առաջարկելով 7,5 դոլար, մինչդեռ Իրանը մեկ բարել նավթի համար պահանջում էր 14 դոլար: Ի վերջո եկան համաձայնության, որի համաձայն մեկ բարել նավթը արժեցավ 11,65դոլար: Կառավարության մասնաբաժինը ևս մեծացավ 7 դոլար նախկին 3,5-ի փոխարեն: Примаков А.Е., Персидский залив: Нефть и монополии, Москва 1983, с. 47. Андреасян Р.Н., Казюков А.Д., ОПЕК в мире нефти, М.1978, с. 99-121.
18. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока, с. 83.
19. Алиев Ариф, Иран vs Ирак: история и современность, М.2002, с. 629-630.
20. Հորմուզի նեղուցն ունի ռազմավարական նշանակություն ոչ միայն Ծոցի երկրների հարաբերություններում, այլև համաշխարհային տնտեսության համար: Հորմուզի նեղուցով յուրաքանչյուր 10 րոպեն մեկ անցնում է մեկ տանկեր, որը կազմում է նավթի տարանցիկ համաշխարհային տեղափոխման 62%-ը: Հորմուզի նեղուցը Պարսից ծոցից դուրս գալու միակ ուղին է բոլոր սահմանակից երկրների՝ Իրանի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Կատարի, Բահրեյնի, Օմանի, Արաբական Միացյալ Էմիրություններ համար: Алиев Ариф, Иран vs Ирак, с. 626. Եվ փաստորեն 1971թ. այս ամենը հայտնվեց Իրանի վերահսկողության տակ:
21. Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М. 1987, с. 163.
22. Алиев Ариф, Иран vs Ирак, с 582.
23. Кейхан интернатионал 16.05.73.
24. Мелихов И.А., Оман между прошлым и настоящим, с.13, 54-55.
25. Pahlavi Mohammad Reza, Answer to History, p. 134.
26. Кейхан интернатионал 16.05.73.
27. Алиев Ариф, Иран vs Ирак, с. 583.
28. Алиев Ариф, Иран vs Ирак, с. 578.
29. Հովհաննիսյան Ն., Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 20004, էջ 48:
30. Ариф Алиев, Иран vs Ирак, с. 586.

31. Кокошина В.А., "Некоторые проблемы американо-иранских отношений в 60-70гг.", Развивающиеся страны. Политика и идеология, Москва, 1985, с. 143.
32. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока, с. 54, Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, с. 165.
33. Арабаджян А.З., Исламская республика Иран: Экономический потенциал, М. 2002, с. 139.
34. Военная экономика стран Востока, N 1, М.1981, с. 100-103.